

Կը գրէ Դաւրիթեցի թէ ի Հռոմ «անիրաւ Եզ-
վիդայքն» դարձեալ եպիսկոպոսի կողմը
պաշտպանելով՝ «ներհակացան Հայոց եւ
ձախ(ող)եցին զբանս նոցա. որ ոչ եղեւ տուեալ
եկեղեցին՝ Հայոց. որ եւ ունայն դարձան»³¹
ողորմելի ժողովուրդքն (պատգամաւորքն) եւ
եկին յիլով»։ Իսկ Եպիսկոպոսը դարձաւ
Հռոմէն յաղթանակաւ³² եւ «կայր, ինչպէս կը
գրէ Դաւրիթեցի (232), ըստ առաջին կար-
գին՝ վտանգելով զժողովուրդսն եւ եւս ա-
նառակուրթեամբ»։

Այսպէս կնճռոտ վիճակի մէջ էին Լեւհա-
հայոց խնդիրները, երբ վախճանեցաւ Մով-
սէս կաթողիկոս։ Իր յաջորդն Փիլիպպոս կա-

³¹ Ս. Ժողովի որոշմանց մէջ կը կարգամ. «Կար-
գինալ Անտոնիոյ զեկուցում ըրաւ Հայոց Մովսէս կա-
թողիկոսի թղթերու մասին, որոնք կը հայէին Լէո-
պոլսի հայ արքեպիսկոպոսի խնդրոց, որ Հռոմէական
Ս. Եկեղեցւոյ հետ միութիւն ըրած էր։ Ս. Ժողովը կը
համարի թէ պէտք չկայ մասնաւոր պատասխան մը
տալ Կաթողիկոսին եւ Լէոպոլսի Հայերուն, որոնք
բաժնուած հեռացած էին միացեալ արքեպիսկոպոսի
հնազանդութենէն եւ նոյն միացեալ արքեպիսկոպոսի
դէմ են»։ Ժողովը 182, դումարեալ առ Սրբազնութեան
29 Ագոստոս 1633. P. S. C. de Prop. de Fide, an.
1632—1638, T. 8, p. 296:

³² Ստ. Ռոչքա, յամն 1632 կը գրէ. Նիկողայոս
արքեպիսկոպոսն Լէօպոլսի Հայոց առեալ ի Վլադիս-
լաւէ Սիկիզմունտէ Թագաւորէն Լեւհաց զճանապարհա-
դիր, զայ ի Հռոմ առ Ուրպանոս Փափն, տալով նմա
զպարտական հնազանդութիւն, զոր մեծաւ պատուով
ընկալաւ Սրբազան Փափն. Հնորհեաց նմա զեմիփորոն
արքեպիսկոպոսեան, եւ կոնտակաւ մակազրեաց զնա
արքեպիսկոպոս Լէօպոլսի եւ բոլոր Թագաւորութեան
Լեւհաց եւ մեծի դքսութեան Լիթվանեայ ազգին Հայոց։
Եւ այսպէս մեծարեալ դառնայ յաթոռն իւր»։ Կամե-
նից, 139: — Ճանապարհադրին պատճենը 5 Յունիս
1632 Թուակիր տե'ս Relatio brevis: